

եղբորթոռներ, որոնք յետագայ ժամանակներու մէջ ինչ նուազ մեծ պատիւ եղած են նրեմիայի թողած փառաւոր համբաւին<sup>1</sup>։

Երեմիա պէտք է թաղուած ըլլայ Պալլաքըի Ազգային գերեզմանատունը, հոն՝ ուր կը հանգչէին արդէն իր ծնողքը, ինչպէս կը զրէ ինքն իր Ստամպուլի Պատմութեանը մէջ<sup>2</sup>։

Հանգիստ իր ոսկորներուն,

Յաւերթութիւն իր յիշատակին...

Քննա, 16 Մայիս 1910:

ՏՕԹԹ. ՂԱՀՐԱՄ Թ. ԹՈՐՈՒՄՆԵԱՆ



### ԻՐԱՆԻԱՐԱՆԱԿԱՆ

ՄԻԻԹԵՐ ԳՕԹԻ ԳՆՏՈՍՏՆԵՐԻՔԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԻՆ ՔԱՂԱՔՆԵՐԻՆԻ ԻՐԱՆԻԱՆԻՔԸ

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ԱՂԱՂԱՍԵՐԻԱԿԱՆ ԻՐԱՆԻԱՆԻՔԸ

(ՀԵՐԱՆԻՍԻՆԻՆԻ)։

ՄԱՍՆ ԶԱՐԲՈՐԴ

ԴՆԱՆՆ ԻՐԱՆԻԱՆԻՔԸ։

Ե.

ԸՆԴՀԱՆՈՐԴ ԴԵՄՈՒՐԻՆԻՔԸ։

Հայոց Դատաստանագրքի Դաշանց իրաւունքը վերլուծելիս, ակներեւ համոզուած ենք, թէ որչափ թոյլ էին զարգացած հին Հայաստանում իրաւաբանական հասկացողութիւններն ընդհանրապէս։ Որեւէ ժողովրդի Դաշանց իրաւունքներն իրարայայացնում է նրա իրաւաբանական զարգացման աստիճանը, հանգիստում է նրա իրաւական յարաբերութիւնների փորձաքարը։ Բաւական է յիշել հռոմէական Դաշանց իրաւունքի ամբողջ պատմութիւնը, որպէս զի տեսնենք, թէ ինչպէս էր արտայայտուած այդ իրաւունքը նրա իրաւաբանական յառաջդիմութեան զանազան շրջաններում։

Հայ ընտանեկան համայնքների նահապետական կազմը սերտ միացած գերիշխող բնա-

կան տնտեսութեան հետ, չէր կարող տալ պարտ հող Դաշանց իրաւունքի զարգացման համար։

Հակառակ հռոմէական եւ մասամբ հին բիւզանդական իրաւունքի, ամէն մի դաշինք, պարտաւորական համաձայնութիւն, ինչպէս էլ դա կուած լինէր, Միտիթար Գօշի Դատաստանագրքի համաձայն ուներ դատաստանական պաշտպանման դժ։ Ընդհանրապէս արեւելքի ժողովրդների մէջ իշխում էր կարծիք, թէ իրաքանչիւր դաշին, որ կապուած էր տեղական իրաւաբանական հայեացքների համեմատ, նոյն իսկ առանց որեւէ ձեւականութիւնների, սովորական ենթադրութեամբ համարուած էր իսկական եւ իւր պաշտպանութեան աւապահութեան համար ճանաչուած էր դատաստանական եղանակը։ Չեւական դաշանց այդ տեսակ բացակայութիւն նկատուած ենք նաեւ հայ Դատաստանագրքում։ Գոնէ ոչ մի տեղ չենք գտնում, որ Միտիթար Գօշը առաջ բերէր դաշանց ու պարտաւորութեանց որեւէ ձեւ կամ նրանց տեսակների առանձին նկարագիրները։

Կանգնած լինելով իւր զարգացման ստորին աստիճանի վրայ, Դաշանց իրաւունքը Դատաստանագրքի մէջ բնականօրէն կրում է մեծ մասամբ իշխան պարտաւորութիւնների բնաւորութիւն (contractus reales)։ Խիստ բնորոշ է այն, որ իրական դաշանց յօդուածները Դատաստանագրքում գրեթէ բոլորը վերցուած են մովսիսական օրէնքներից։ Դատաստանագրքի մէջ գտնում ենք նաեւ թոյլ փորձեր համայնական դաշանց (contractus consensuales) կառուցման։ Վերջին ձեւի դաշինք ըստ Միտիթար Գօշի տեղի ունէին անշարժ իրերի գնման վաճառման ժամանակ։

Հայոց Դատաստանագրքի Դաշանց իրաւունքի մի այլ բնորոշ գիծն էլ նրանումն էր, որ թէ էլ-ով (re) եւ թէ՛ համայնական (consensu) կայացրած պարտաւորութիւններն, այնուամենայնիւ կարող էին համարուել անկատար։ Այդ պարտաւորութիւններն օժտուած էին յետ-հանգիստ իրաւունքներով (Rücktrittsrecht, actio redhibitoria)։ Թէ՛ պարտատէրը (creditor) եւ թէ՛ պարտապանը (debitor) որոշ դէպքերում, նայած պարագաներին, կարող էին յետ կանգնել իրենց պայմանաւորուած պարտաւորութիւններից։ Վաճառուած սուներ, կարւածքը, ջրաղացը կարող էր սեփականատէր-վաճառողը մի տարուայ ընթացքում վերադարձնել յետ,

<sup>1</sup> «Պատմ. Զարդ» համայնական հ. Գ. Ինձինձեան, Վենետիկ 1804, Հատոր Ե. էջ 182։

<sup>2</sup> «Ստամպուլի Պատմութիւն» Դ. Գլուխ, 164րդ տող։

Հատուցանելով ի Հարկէ կանխօրէն գնման ար-  
ժեքը (II, գլ. ԾԲ, ԾԳ, ԾԴ, ՃԷ)<sup>1</sup>:

Միւրիմար Գօշի Դատաստանագրքի ար-  
ծարձած Դաշանց իրաւունքի ամենագլխաւոր  
յատկութիւններից մէկն էլ նրա Հասարակա-  
կան, Հրապարակական բնաւորութիւնն է: Պար-  
տաւորութեան պայմաններ կապելիս անհրա-  
ժեշտ պահանջուում է վկաների ներկայութիւն,  
որոնց թիւը Միւրիմար Գօշը սահմանում է երեք.  
“Եւ զըրեքտանիս վաճառեալ — երից վկայից  
առաջի Հաստատից գայտսիկ” (II, գլ. ԾԵ).  
կամ “վաճառք ամենայն Հաստատին, յորժամ  
որք վաճառեն” ամենեցուն յանձնարարութեամբ  
եւ վկայութեամբ կամք ընդ նոսա իցե” (II, գլ.  
ՃԷ): Հոմանիշ երեւոյթ նկատելի է նաեւ բիւ-  
քանդական իրաւունքի պատմութեան մէջ:  
Eklogai հիման վրայ պահանջուում է, որ  
գրաւոր դաշնից կայացուին երեք վկաների ներ-  
կայութեամբ: Դմանապէս Ekloga privata aucta  
թոյլարուում է բանաւոր Համաձայնութիւններ  
կռել (δμολόγησις) միմայն վկաների ներկայու-  
թեամբ<sup>2</sup>:

Նկատի առնելով Բիւզանդիոնի մեծ ազ-  
դեցութիւնն Հայերի վրայ, առաջին Հայեացքից  
կարելի էր կարծել, արդեօք վկաների այդ ան-  
հրաժեշտութիւնն Դատաստանագրքի որոշումնե-  
րում առաջ չի եկել բիւզանդական աղբիւր-  
ներից: Սրա դէմ կարելի է առաքել, որ վկա-  
ների իմնարկութիւնը գոյութիւն ունի շատ  
ժողովրդների ին իրաւունքներում, ինչպէս եւ  
արդի սովորութիւններում, որոնք ոչ մի կապ չու-  
նին բիւզանդական քաղաքակրթութեան ազդե-  
ցութիւնների հետ: Մեր կարծիքով այդ Հարցի  
որոշումը, թէ վկաների վերաբերեալ Դատաս-  
տանագրքի սահմանումները բիւզանդական են  
թէ ոչ, կարելի է լուծել միմայն ժամանակա-  
կից Հայերի սովորութեան իրաւունքի հետա-  
զօտութեամբ:

Դաշանց Հասարակական-Հրապարակական  
բնոյթի հետ սերտ կապուած է հետեւեալ բնո-  
րոշ երեւոյթը: Մեզ արդէն յայտնի է, թէ  
նահապետական կազմի ընտանեկան Համայնքում  
միակ անձն, որ գերդաստանի կողմից Հանդէս է  
գալիս Համայնական շահերը պաշտպանելու  
օտարների առաջ, — դա գերդաստանի գլուխը՝  
“տանուտէրը, կամ “ըմբ” է: Ի Հարկէ դա-  
շնից կռելու իրաւունք ունի միայն գերդաստանի

այդ գլխաւորը, սակայն միեւնոյն ատեն հակա-  
ռակ իւր ունեցած անսահման իրաւունքների ու  
գերդաստանական լիազօրութիւնների նա այ-  
նուամենայնիւ պարտաւորական համաձայնու-  
թիւններ կայացնելիս իրականօրէն որոշ չափով  
սահմանափակուած է այդ իրաւունքներում. նա  
այդ դէպքերում պիտի դիմէ գերդաստանի մնա-  
ցեալ մօտիկ անդամների կանխակալ համաձայ-  
նութեանը (II, գլ. ՃԷ): Սա մի համատարած  
երեւոյթ է, որ տեղի ունի մի քանի ժողովրդների  
սովորութեան իրաւունքներում, որոնք ապրում  
են տակաւին նահապետական գերդաստանական  
կազմով: Այդպէս են կովկասեան լեւներում  
ապրող օսերը<sup>1</sup>: Իսկ հնդկացիները այդ սովո-  
րոյթին իրաւաբանական-օրէնսդրական ոյժ են  
տուել, մեծելով դա իրենց օրէնքներում. վիս-  
զա կուուած օրէնսգրքում ստուած է. “Գեր-  
դաստանի առնձին անգամը չի կարող ոչ վա-  
ճառել, ոչ էլ ընծայել գերդաստանի անշարժ  
ստացութեանը, ինչպիսի էլ դա լինի”, Vivad  
Chintamanit անուանած գրքում սահմանուած  
է. “Ինչ որ պատկանում է շատերին, դա կա-  
րելի է օտարացնել ուրիշին միմայն բոլորի հա-  
մաձայնութեամբ”, եւ վերջապէս Միտաքշար  
օրէնքների ժողովածուի համաձայն պահանջու-  
ում է որեւէ սեփականութիւն ուրիշին յանձ-  
նելու դէպքում բոլոր ազգականների համա-  
ձայնութիւնը<sup>2</sup>: Մի այլ հոմանիշ օրինակ է  
ներկայացնում իրանական իրաւունքը՝ Corus  
Besena, որ պահանջում է բոլոր օտարացումները  
կամ ընծայումները կատարել գերդաստանի  
անդամների ընդհանուր համաձայնութեամբ եւ  
խելաքար է համարում նրան, ով դաշն է կա-  
պում որգու հետ, առանց նրա հօր ներկայու-  
թեան կամ մասնակցութեան:

Այս օրինակները թուեցինք իբրեւ ապա-  
ցոյցներ, որ Միւրիմար Գօշի ՃԷ յօդուածով սահ-  
մանած օրէնքը որեւէ օտար ժողովրդից ազդուած  
կամ օտար օրէնքներից փոխառած նորմ չէ, այլ  
բուն ժողովրդական բարքերից ու գերդաստա-  
նական իրաւական յարաբերութիւններից բխած  
երեւոյթ է: Այդ երեւոյթը ծաղկում է այն-  
պիսի ժողովրդների մէջ, որոնց վերաբերմամբ,  
ինչպէս մեր յիշած օսերի ու իրլանդացիների, չի  
կարելի ենթադրել, թէ այս դէպքում անսնում  
ենք որեւէ մէկի ազդեցութիւնը միւսի վրայ  
կամ իւրացում: Տան մեծի իրաւունքի այդ տե-

<sup>1</sup> Համմ. “Ընչական իրաւունքը ներկայ աշխատու-  
թեան Գ. մասի I գլուխը:

<sup>2</sup> Zachariae եր. 290:

<sup>1</sup> М. Ковалевский — Древний закон, т. I,  
кн. 146-147:

<sup>2</sup> Այդ եր. 31-32:

սակ սահմանափակումն ստացուածքի օտարացման հարցում բղիւում է հնչեց դերդաստանի նահապետական արնատական բնոյթից, որը նայում է ընտանեկան գոյքի վրայ իբրեւ անբաժանելի սեփականութիւն ամբողջ գերդաստանական համալիրի:

Հայոց Դատաստանագիրքը տարբերում է նաեւ գրաւոր դաշինք, որոնք պիտի անպայման հաստատուէին կամ վաւերացուէին դատաւորների կողմից նրանց կնիքներով. նմանապէս կարող էին հաստատուել հայրապետների ու եպիսկոպոսների ձեռքով. «իսկ գիր հաստատուն նշանաւ դատաւորին լինի» (11, 44. 26): Ծամենայն դէպս, ինչպէս եզրակացնելի է դատաստանագրքից, գրաւոր դաշինքները չունէին ձեւական նշանակութիւն եւ պարտաւորեցուցիչ չէին դատաստանական պաշտպանութեան համար: Այդ տեսակ պաշտպանութեան ոյժ վերապահուած բոլոր համաձայնութիւններին, որոնք կայացած էին նաեւ բանաւոր կերպով որեւէ վկաների ներկայութեամբ:

Ըստ երեւութի գրաւոր դաշինք մեծ ծաւալումն ունէին Հայաստանում, մանաւանդ տուրեւառի, առաւելապէս անշարժ կալուածների օտարացման դէպքերում: Ներկայ մեր աշխատութեան առաջին գլուխներում արդէն փորձել էինք սպացուցանել, որ հին Հայաստանում տակաւին զանազան դաշանց գրաւոր գործողութիւններ էին տեղի ունենում: Նմանապէս եւ այժմ Հայ ժողովրդի սովորելներում համատարած երեւոյթ է, որ երկու կողմերը փոխադարձ համաձայնութեան դաշն յաճախ կապում են գրաւոր, առանց որեւէ յատուկ ձեւականութիւնների կամ իրաւաբանական պահանջների:

Դառնալով դաշանց կատարման հարցին, կը տեսնենք, որ Դատաստանագիրքը ոչ մի տեղ այդ մասին պարզ որոշ չի արտայայտուում: Մի քանի հատ ու կտոր ցրուած նախադասութիւններինց եզրակացնում ենք, որ դաշանց պարտաւորութիւնների պաշտպանումը վերապահուած էր դատարաններին: Միխիթար Գօշը քանիցս կրկնում է, որ քաղաքացիական օրինականութիւնների ու պարտաւորութիւնների թերանալու դէպքերում վճռական խօսքը պատկանում է դատաստանին: Միեւնոյն ժամանակ պէտք է ենթադրել, որ ժողովրդի սովորութեան իրաւունքին խորթ չէր, որ դաշանց կատարման մէջ ստէկ կողմերի ինքնօգնութիւնը կամ ինքնագլուխ դատաստանն էր հանդէս գալիս:

Մանաւանդ դա կարող էր արտայայտուել այն եղանակներում, երբ պարտատէրը բռնի տիրանում էր պարտապանի որեւէ ընչքին, որ ծառայում էր որպէս պարտաւորութիւնների չգրիտ կատարման ապահովութեան գրաւ: Սակայն այս տեսակ միջոցները, ինչպէս արդէն առիթ ունեցել ենք յիշելու, Դատաստանագիրքն այնքան էլ չի խրախուսում:

(Հարգանքներ)

Խ. ՍՍՄՈՒՆԵԱՆ



## Լ Ե Զ Ո Ւ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն

### ՀԵՑ ԼԵԶՈՒԻ ՈՐԳԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ԸՆ Գ. ԳԱՐԻԽԷԼ Ժ. Վ. ՄԷՆԵՎԻՇԵԱՆ

#### Գերապատիւ Հայր

Թէեւ Ձեր Գերապատուութիւնը անձնապէս ճանչնալու բախտը չեմ ունեցած ցարդ, սակայն իբր ընթերցող «Հնդեւ Աօրեւիշ» առիթ առնելով նոյն պատուական Հնդեւի Ապրիլի, Մայիսի եւ Գունիսի թուերուն մէջ հրատարակուած հմտալից յօդուածներէն՝ «Հայ լեզուի ուղղագրութեան» վրայ, ներեցէք որ համարձակիմ ներկայս ուղղել մեծանուն Յս. դուածագրիդ, միոյն արդի Հայ բանասիրութեան սակաւաթիւ վարպետներէն:

Նախ, ըսեմ թէ սրտագին շնորհաւորութիւն եւ շնորհակալութիւն միայն ունիմ Ձեզ յայտներէք՝ այդ յօդուածներուն համար, որով Ձեր հեղինակաւոր գրչին մեծ կշիռը կը բերէք ի սպաս պահպանութեան մեր շարաւուկ լեզուին, որուն հնամի ցանկապատը շատ տեղերէ խրամատուած ըլլալով, հասնողը ներս կ'արշաւէ սանձարձակ, ինչ որ վստանք կը սպաւնայ Մեսրոպեան զմայլելի դարաստանին գեղապատշաճ յօրինուածութիւնը խանգարելով՝ կարգ մը իբր թէ արդիական կամ յառաջդիմական նորութիւններով, որոնք լեզուին կազմական հանգամանքներուն եւ հիմնական կանոններուն դէմ մեղանշումներ ըլլալէ զատ, գոնէ հինին վրայ առաւելութիւն ալ չունին աւելի կոկիկ, ճկուն կամ ներդաշնակ ըլլալու, հետեւաբար կարծեմ աւելի չարափոխուած կրնան նկատուիլ՝ քան թէ բարեփոխուած:

Արդարեւ, Ա. լեզուաբանական ո՞ր օրէնքի, քերականական կամ ուղղագրական որ կանոնի վրայ յենելով պէտք է եղեր գրել ներքին փոխա-